# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 895 |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Official Incorporation (19.04.2018-25.08.2020) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | ՀՀՊՏ 2001.10.18/32(164) Հոդ.773 |
| Ընդունող մարմին | ՀՀ կառավարություն |
| Ընդունման ամսաթիվ | 24.09.2001 |
| Ստորագրող մարմին | ՀՀ վարչապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 24.09.2001 |
| Վավերացնող մարմին | ՀՀ Նախագահ |
| Վավերացման ամսաթից | 24.09.2001 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 24.09.2001 |

040.0895.24.09.01

*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*24 սեպտեմբերի 2001 թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2001 թվականի N 895
քաղ. Երևան

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով և հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 17-րդ և 43-րդ հոդվածները` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված` լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը լիցենզավորող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմիններ են հանդիսանում համապատասխանաբար`

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը` աղյուսակի 1-ին բաժնի 5-րդ և 11-րդ կետերով.

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը` աղյուսակի 3-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով.

3) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը` աղյուսակի 6-րդ բաժնի 6-րդ, 15-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 18-րդ բաժնի 8-րդ կետերով.

4) ***(ենթակետն ուժը կորցրել է 26.05.16 N 537-Ն)***

5) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը` աղյուսակի 9-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով.

6) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը` աղյուսակի 11-րդ բաժնի 1-ին կետով և 16-րդ բաժնով.

7) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը` աղյուսակի 17-րդ բաժնով.

8) համապատասխան լիցենզավորող մարմինները` աղյուսակի 18-րդ բաժնի 1-ին կետով.

9) ***(ենթակետն ուժը կորցրել է 12.04.18 N 421-Ն)***

10) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ աղյուսակի 1-ին բաժնի 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով.

11) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն` աղյուսակի 12-րդ բաժնով.

12) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ աղյուսակի 1-ին բաժնի 1-ին և 2-րդ կետերով:

***(1-ին կետը խմբ., լրաց. 12.11.01 N 1093, փոփ. 22.11.01 N 1156, լրաց. 20.06.02 N 863-Ն, խմբ., փոփ. 23.04.03 N 438-Ն, խմբ. 26.06.03 N 819-Ն, լրաց. 29.04.04 N 589-Ն, 17.03.05 N 332-Ն, խմբ. 19.05.05 N 610-Ն, 25.05.05 N 677-Ն, լրաց. 15.09.05 N 1506-Ն, խմբ. 09.02.06 N 103-Ն, լրաց. 22.09.06 N 1446-Ն, փոփ. 28.09.06 N 1371-Ն, լրաց. 02.11.06 N 1566-Ն, 05.04.07 N 404-Ն, փոփ. 06.07.07 N 778-Ն, փոփ., լրաց. 08.10.08 N 1143-Ն, խմբ. 05.02.09 N 114-Ն, 19.03.09 N 306-Ն, 26.02.09 N 196-Ն, փոփ., լրաց. 22.10.09 N 1218-Ն, փոփ., խմբ. 11.03.10 N 219-Ն, լրաց. 19.08.10 N 1049-Ն, խմբ. 18.03.11 N 246-Ն, փոփ. 15.12.11 N 1767-Ն, լրաց., փոփ. 28.06.12 N 787-Ն, փոփ. 30.08.12 N 1100-Ն, 30.08.12 N 1097-Ն, 12.12.13 N 1407-Ն, փոփ. խմբ. 22.05.14 N 536-Ն, փոփ., լրաց. 09.10.14 N 1097-Ն, խմբ., փոփ. 26.05.16 N 537-Ն, փոփ. 12.04.18 N 421-Ն)***

2. ***(կետն ուժը կորցրել է 26.05.16 N 537-Ն)***

3. ***(կետն ուժը կորցրել է 26.05.16 N 537-Ն)***

4. Սահմանել, որ լիցենզիաների ձևերը սահմանվում են համապատասխան լիցենզավորման կարգերով:

***(4-րդ կետը փոփ. 26.05.16 N 537-Ն)***

4.1. Մինչև «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից բժշկական ու դեղագործական մասնագիտությունների գծով տրված բարձրագույն և միջին մասնագիտական կրթական գործունեության լիցենզիաների մասով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի իրավասությունները

վերապահել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:
***(4.1-ին կետը լրաց. 29.06.06 N 924-Ն)***
5. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը` 15-օրյա ժամկետում մշակել և սույն որոշման 1-ին կետում նշված նախարարություններին ու գերատեսչություններին տրամադրել լիցենզավորող հանձնաժողովների օրինակելի կանոնադրությունը:
6. Սույն որոշման 1-ին կետում նշված նախարարություններին և գերատեսչություններին`
ա) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակված լիցենզավորող հանձնաժողովների օրինակելի կանոնադրության հիման վրա 15-օրյա ժամկետում հաստատել լիցենզավորող հանձնաժողովների կանոնադրությունները.
բ) մեկամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել համապատասխան լիցենզավորման կարգերը:Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական գործունեության լիցենզավորման կարգը և Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորման կարգը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու ժամկետները սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո մեկամսյա ժամկետում:
գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 26.06.03 N 819-Ն)***
***(6-րդ կետը լրաց. 30.04.02 N 481, փոփ. 26.06.03 N 819-Ն)***
7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի 1991 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի մասին» N 161 որոշումը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի սեպտեմբերի 24-ից:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ա. Մարգարյան**

Փոփոխման պատմություն

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
|---|---|
| 26.02.2026, N 208-Ն | 24.09.2001, N 895 |
| 18.07.2024, N 1102-Ն | 24.09.2001, N 895 |
| 11.08.2022, N 1243-Ն | 24.09.2001, N 895 |
| 17.12.2020, N 2089-Ն | 24.09.2001, N 895 |
| 20.08.2020, N 1375-Ն | 24.09.2001, N 895 |
| 12.04.2018, N 421-Ն | 24.09.2001, N 895 |
| 26.05.2016, N 537-Ն | 24.09.2001, N 895 |
| 09.10.2014, N 1097-Ն | 24.09.2001, N 895 |
| 22.05.2014, N 536-Ն | 24.09.2001, N 895 |
| 12.12.2013, N 1407-Ն | 24.09.2001, N 895 |
| 30.08.2012, N 1097-Ն | 24.09.2001, N 895 |
| 30.08.2012, N 1100-Ն | 24.09.2001, N 895 |
| 28.06.2012, N 787-Ն | 24.09.2001, N 895 |
| 15.12.2011, N 1767-Ն | 24.09.2001, N 895 |
| 18.03.2011, N 246-Ն | 24.09.2001, N 895 |
| 19.08.2010, N 1049-Ն | 24.09.2001, N 895 |
| 11.03.2010, N 219-Ն | 24.09.2001, N 895 |
| 22.10.2009, N 1218-Ն | 24.09.2001, N 895 |
| 26.02.2009, N 196-Ն | 24.09.2001, N 895 |
| 19.03.2009, N 306-Ն | 24.09.2001, N 895 |
| 05.02.2009, N 114-Ն | 24.09.2001, N 895 |
| 08.10.2008, N 1143-Ն | 24.09.2001, N 895 |
| 06.07.2007, N 778-Ն | 24.09.2001, N 895 |
| 05.04.2007, N 404-Ն | 24.09.2001, N 895 |
| 02.11.2006, N 1566-Ն | 24.09.2001, N 895 |
| 22.09.2006, N 1446-Ն | 24.09.2001, N 895 |
| 28.09.2006, N 1371-Ն | 24.09.2001, N 895 |
| 29.06.2006, N 924-Ն | 24.09.2001, N 895 |
| 09.02.2006, N 103-Ն | 24.09.2001, N 895 |
| 15.09.2005, N 1506-Ն | 24.09.2001, N 895 |
| 25.05.2005, N 677-Ն | 24.09.2001, N 895 |
| 19.05.2005, N 610-Ն | 24.09.2001, N 895 |
| 17.03.2005, N 332-Ն | 24.09.2001, N 895 |
| 29.04.2004, N 589-Ն | 24.09.2001, N 895 |

| | |
|---|---|
| 26.06.2003, N 819-Ն | 24.09.2001, N 895 |
| 23.04.2003, N 438-Ն | 24.09.2001, N 895 |
| 20.06.2002, N 863-Ն | 24.09.2001, N 895 |
| 30.04.2002, N 481 | 24.09.2001, N 895 |
| 22.11.2001, N 1156 | 24.09.2001, N 895 |
| 12.11.2001, N 1093 | 24.09.2001, N 895 |

**Փոփոխված ակտ**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
|---|---|